



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ № 05Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ԹԻՎ 21Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՁ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 65-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը՝

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի «Դատավորների կնիքների և դրոշմակնիքների գծապատկերները հաստատելու մասին» թիվ 21Լ որոշման 1-ին հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

ա) Հավելվածը լրացնել ՀՀ վճռաբեկ դատարանի դատավոր Ռուզաննա Հակոբյանի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Մխիթար Պապոյանի անվամբ կնիքների գծապատկերներով՝ համաձայն հավելվածի:

բ) Ուժը կորցրած ճանաչել ՀՀ վարչական դատարանի դատավոր Ռուզաննա Հակոբյանի և Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մխիթար Պապոյանի անվամբ կնիքների գծապատկերները:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի փետրվարի 06-ից:

Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների
խորհրդի նախագահ

2015թ. փետրվարի 05
ք.Երևան

Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ